

ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Յմարագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերէից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

1903 թ-ին

12 ամսուանը	10 ռուբլի
11 »	»
10 »	9 »
9 »	8 »
8 »	»
7 »	6 »
6 »	»

Մնացածները ամսական 1
Եւրոպայում 30 ֆր., Ամերիկայում 6 դոլլար,
Պարսկաստանում 10 ռ.
Հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».

ԲՈՒՆԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Թուրքերէն նոր լրագիր.—Ներքին ՏԵՍՈՒԻ-
ԻՒՆԻ. Հանրագիտական բառարանը հայերի մա-
սին. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր.—ՀԵՌԱՊԵՐԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ
Բաֆֆի կենսաբան.

ԹՈՒՐԻՔԵՐԷՆ ՆՈՐ ԼՐԱԳԻՐ

Կիրակի, մարտի 30-ին, Թիֆլիսում լոյս
տեսաւ Թուրքերէն «Շեքարէի Ռուս» (ռու-
սական արեւելք) լրագրի առաջին համարը.
Մօհամմէդ Շահճախանովսկու խմբագրու-
թեամբ: Լրագիրը պէտք է հրատարակվի
Ազերբեջանի Թուրքերէն բարբառով, որով
խօսում է Անգրիկական թուրքերի մե-
ծամասնութիւնը: Լրագիրը ունի միջին
գիրը, լոյս պէտք է տեսնէ շաբաթը երեք
անգամ՝ կիրակի, չորեքշաբթի եւ ուրբաթ
օրերը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՅԵՐՆԵՐ

ՐԱՅՅՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆ

(Եւրոպական)

Բանաստեղծը 1870 թվականից մինչև 1875-ը
Թիֆլիսում էր, բայց դառն, խիստ դառն չը-
քաւորութեան մէջ. Նա կրած դրամական
տագնապը և ապրուստի միջոցների համար
ունեցած տառապանքը խիստ զարհուրելի է
եղել. մանաւանդ մինչև 1872 թվականը. Նա
մի օր ինձ հետեւադը պատմեց իր ունեցած
կարօտ և չքաւոր վիճակի մասին:

—Ինչու թողնեմք, ես այն աստիճան հացի
կարօտ մնացի Թիֆլիսում, որ օրվայ կարիքն
ինձ ստիպեց մի հասարակ գործակատարի
պաշտօն ընդունել մի մագաղանում, այն էլ ոչ
թէ իսկական գործակատարի, այլ պարզապէս
մի դուրանչու աշակերտի պաշտօն, մի չնչին
առձեռնիկ. Օրվայ հացս զանազան համար յանձն
առայ այդ ստորութիւնը Մագաղանում պատ-
րաստի հագուստների էինք վաճառում, ես չը-
րերի հագնում էի յաճախորդներին, ջղաճի-
ւերից բռնելով, քաշելով յարմարացնում էի
և ուռւա գովաբանութիւններ էի անում, որ
մուշտարուն ձեռքիցս չը փախցնեմ Մի ան-
գամ մի երիտասարդ ծանօթի մի քանի իրե-
ղէններ նիսիս էի վաճառել, այդ օրը քիչ էր
մնում, որ ինձ մագաղանից դուրս վաճառէին:
Այն, ինչ զգուշի պաշտօն էր այդ և որքան
անտանելի...

Բայց երբ 1872 թվականից բանաստեղծը ծա-
նօթանում է արժանաշիշատակ Գրիգոր Արծ-
րեւուն հետ և նրա խորհրդով սկսում է գրել
«Մշակում», նրա անսպասելի վիճակը մի քիչ
փոխվում է և նա սկսում է շունչ քաշել:

Մենք սրտանց ողջունում ենք Թուրքե-
րէն լրագրի լոյս տեսնելը, ցանկանալով, որ
նա կարողանայ գրաւել ընթերցողների մեծ
շրջան, ընտելացնէ Թուրք ընթերցողին
հասարակական և առօրեայ հարցերի հրա-
պարակական քննութեանը և մոցնէ Թուրք
ազգայնականութեան կրթական միջոցների
շարքի մէջ մի այնպիսի կարևորը, ինչպէս
է մամուլը:

Թուրք ազգայնականութիւնը սովոր է
հրապարակական քննադատութեանը և ան-
կասկած ժամանակ է հարկաւոր մինչև որ
նա կարողանայ այդ քննադատութեան մէջ
ուժեղ դեր կատարել, սակայն ամեն տեղ
գործը սկսվել է փորձից, փորձառականու-
թեան ջանքերից և ազգայնական դարձել
մեծ շրջանների սեփականութիւն: Նոյնը
կը լինի և մեր Թուրք հարեւանների դար-
գացման ասպարէզում:

«Շեքարէի Ռուս» լրագրի ծրագրերը թոյլ
է տալիս խօսելու Կովկասի ներքին կենսա-
մասին, Ռուսաստանի կենսաբան, արտասահ-
մանեան դէպքերի, տնտեսական և առե-
տրական գործերի, գրական-գիտական ե-
րևոյթների, դատաստանական քննութիւն-
ների մասին—մի խօսքով հնարաւորութիւն
է ընծայում թուրք ընթերցողին ինքնով հե-
տաքերի Թուրք ընթերցողին և հազար-
դէլ նրան բազմաթիւ տեղեկութիւններ
թէ Թուրք ժողովրդի, թէ մեր երկրի
միւս ազգութիւնների, թէ պետութեան
ընդհանուր կենսաբան և թէ դրսի աշխարհի
մասին:

Թուրք լրագիրը կարող է գրաւել ըն-
թերցողների մի ընդարձակ շրջան, նաև
մեր Կովկասից դուրս Պարսկաստանի սահ-
մանակից մասերում, որտեղ Թուրք տարրը
կազմում է ազգայնականութեան մեծամաս-
նութիւնը: Մանաւանդ այժմ, երբ Ռու-
սաստանը առանձին ազգեցութիւն է ձեռք
բերել Պարսկաստանի հիւսիսում և առե-

տրական յարաբերութիւնները երկու պե-
տութիւնների մէջ սկսել են առանձին կեն-
դանութիւն ստանալ, Թուրք լրագիրը կա-
րող է որոշ դեր կատարել:

Սակայն այստեղ մեզ թոյլ ենք տալիս
մի կարևոր նկատողութիւն անելու: Մենք
կը ցանկանայինք, որ լրագրի լեզուն շատ
մօտ լինէր այն բարբառին, որով խօսում է
մեր երկրի և Ազերբեջանի Թուրք ազգա-
նականութիւնը, որ նա խճողված չը լինէր
բազմաթիւ արաբական և պարսկական բա-
ռերով, անհասկանալի հասարակ ընթեր-
ցողի համար: «Շեքարէի Ռուս» լրագրի
առաջին համարում մենք նկատում ենք, որ
մի քանի յօդուածների մէջ ձգտում կայ
չափազանց խրթին և միայն քիչերին մատ-
չելի բառեր գործածել: Դա նման է այն
բանին, ինչ որ մի ժամանակ կար մեր հա-
յերի մէջ, երբ հեղինակները գրում էին
գրաբառ լեզուով կամ մի այնպիսի աշխար-
հաբառով, որ լինէր էր գրաբառի խօսքե-
րով և դարձաւ ծանր: Դա սխալ հա-
յեացք է լրագրական գործի վրա: Լեզուն
պէտք է լինի կարելիին չափ պարզ, հա-
սարակ, մատչելի ընդհանրութեան համար,
որպէս զի նա կարողանայ իր դերը կատա-
րել աշխարհագրական և գրաւէ ժողովրդական
մասսա դէպի ընթերցանութիւն: Այդպէս
են անում Եւրոպացիները, այդպէս են ա-
ռաջ գնացել ռուսները և մեր երկրում
հայերը և վրացիները: Այդ ճանապարհով
պէտք է գնան և Թուրքերը:

Մանկանում ենք նոր խմբագրութեանը
լուսաւոր գործունէութիւն մեր հարեւան
Թուրք ժողովրդի մէջ, հիմնված եւրոպա-
կան քաղաքակրթութեան հիմունքների
վրա, ամրապնդված ազգերի համարաշի-
նործակցութեան քաղաքականների վրա և
հաստատված առողջ ու համարձակ ինք-
նաքննութեան վրա:

պաշտօնի ստանձնեց Նա մի համեստ և բա-
րիխիղճ վարդապետ էր և պատկանում էր
կրթված դասին: Նոր թեմակալը նկատեց, որ
Թուրքի միակ արական դպրոցը, այժման
Արամեան դպրոցը, համապատասխան չէ իր
կոչման, ուստի և իր ամբողջ ուշադրութիւնը
գործից նրա վրա:

Այդ դպրոցը կառուցել էր նախկին թեմա-
կալ, երախտաշատ Սաակ Կալիկոպոս Սա-
թուհանը 1850 թվականին, մասամբ իր սե-
փական և մասամբ ժողովրդի արդիւններով և
իր բազմադիր ջանքերով, որին էլ անուանել
էր Ներսէս V Կաթողիկոսի յիշատակին նուիր-
ված, այն դիտաւարութեամբ, որ դպրոցը
Արաքսազական հայոց նոր սերունդի մտաւոր
զարգացման բաւականութիւն տալ: Բայց հան-
գուցեալի մահից յետոյ նորակառուց դպրոցը
իր որոշ նպատակով չէր ընթացել: Ճիշտ մի
քանոց դար սահել էր դպրոցի գլխով, որպէս
հոգին դուր հոսէ:

Նոր թեմակալը թէ Կալիկոպոս ընտրեց և թէ
առաջնորդաբանում ժողովրդի կազմելով բա-
ցատեց հասարակութեան աւանական կարիքները,
դպրոցը նորանոր փոփոխութեան ենթարկելու
պէտքը՝ նոր մանկավարժական ուղղութեամբ
և այլն: Բացառեց, որ Եթէ ժողովրդը ան-
տարբեր մնայ, ինքն այդ դէպքում միայնակ
ոչինչ չէ կարող անող: Հասարակութեան
առաջաւոր մասը, ընտնելով թեմակալի կու-
տորական օգտակար առաջարկութիւնները և
իր աշակցութիւնը խոստանալով, դիմում է
անմիջապէս դրամական հանգանակութեան,
որը մի քանի օրվայ մէջ հասցնում է մօտ
տասն հազար ռուբլի: Թեմակալի ջանքերով
պատրաստվել մի ընդարձակ ուսման ծրագիր
դպրոցի համար և կազմվել մի նոր հոգաբար-
ձական մարմին 6 հոգեւ ընդհանրա՝ Նոր թե-
մակալը այնուհետև մի քանի ուսումնասէր և
բանիմաց անձինքների հետ աշխատելով հաս-
տատեց և մի գրադարան-ընթերցարան, որ
դպրոցի չափ կարեւոր էր: Պոլսից և Կովկասից

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԱՐԱՆԸ ՀԱՅԵՐԻ

ՄԱՍԻՆ

Բացառութեան կարօտ չէ անշուշտ, ցոյց
տալու համար, թէ հասարակութեան կրթա-
կան-ուսումնական շրջանում մըման մեծ նշա-
նակութիւն ունի մի բազմակողմանի ուսում-
նաթիւրութեամբ կազմած հանրագիտական բա-
ռարան, կամ, ինչպէս եւրոպացիք են անուա-
նում «Konversations-Lexikon»: Դա մի «ամե-
նագէտ», ամեն բան պարունակող համառոտ
ձեւակարգ է, դէպք որը վաղուէ է ամեն մէկը,
որ և է գաղափարի իմաստը հիմնովին ճանա-
չելու համար: Բացի գիտական տեղեկանքի,
բոլոր ճիւղերի, հասարակական-գիտական զա-
նազան ուղղութիւնների, կուսակցութիւնների,
պատմական նշանաւոր դէպքերի և յայտնի
անձնաւորութիւնների վերաբերված ամփոփ
ու կարեւոր ծանօթութիւններ տալուց, ամեն
հետաքրքիրը կարող է աշխարհագրական որ
և է վայրի, երկրի, որ և է ժողովրդի, նրա
ծագումն, պատմութեան, կրօնի, գրականու-
թեան և այլն վերաբերմամբ գիտացուցիչ տե-
ղեկութիւններ քաղել: Հայաստանն ու
հայը եւ, որպէս մի երկիր ու ժողովուրդ, բը-
նականաբար գրաւել են հանրագիտական բա-
ռարանի մի անկիւնը: Բայց ինչպէս, այդ է
խնդիրը: Մենք գիտաւորութիւն հոսնեց այս-
տեղ ընթերցողին մասնաւոր հաղորդել այն,
ինչ տալիս է բառարանը, այլ տեղ այն, ինչ
նա չէ տալիս, սակայն շատ ցանկալի և ան-
հրաժեշտ է, որ նա տալ:

Գերմանիայի ամենալայնածիր և խիստ տա-
րածված հանրագիտական բառարաններ հա-
մարվում են Բրոքհաուզի և Մայերի լեքսիկո-
նները, որոնց վերջին հրատարակութիւնը (Բրոք-
հաուզի 14-րդ և Մայերի 6-րդ) կատար-
վում է այժմ 1901—1903 թ-ի: Բայց ես անում
ստացվեցան հարկաւոր ընթերցանութեան
օգտակար գրքեր, հայերէն և օտար լեզուե-
րով: Այդ միջոցին գրական աշխարհին ծանօթ
պ. Հ. Առաքելեանը, որ մեր քաղաքում էր
ընակված, գործում էր երիտասարդական մեծ
եռանդով: Պէտք է աւելացնել, որ ընթերցա-
րանի կազմակերպութեան համար մինչև նրա
ջանքերին երբ պարտական Նոր հոգաբարձու-
թիւնը մի քանի ուսուցիչներ հրաւիրեց Արա-
մեան դպրոցի համար, որոնցից մէկն էլ Բաֆ-
ֆին էր:

—Երբ Արամեան դպրոցի հայերէն լեզուի
ուսուցչութեան պաշտօնը Թիֆլիսում ինձ ա-
ռաջարկեցին, ստանալ էր Բաֆֆին, սիրտս ճիս-
տով ընդունեցի և անմիջապէս ուղևորվեցի դէ-
պի Պարսկաստան: Թիֆլիսը ես չափ եմ սի-
րում, ասում էր նա, բայց կենսաբ. պայման-
ները թանկ են այնտեղ, ես թէև մի կերպով
պարտ էի, բայց միշտ ընտանիքիցս հեռու
եթէ ընտանիքս Թիֆլիս փոխադրէի, մեծ ծախ-
քեր պէտք է անէի, որը ես չէի կարող գտնել,
բայց ազատ հեղուկութեամբ կարեւոր թաւ-
րի դուրս ընտանիքս հետ, որովհետև կենսաբ.
պայմանները այնտեղ աւելի նպաստաւոր են:
Մանաւանդ որ ես չափ սիրում եմ մեր նոր
սերունդի կրթական գործերով պարագլուխ Մի
այլ առաւելութիւն կայ ինձ համար, որ այս-
տեղ հանգարտ ապրելով մի կողմից թէ իմ
հեղինակութիւնը եր պատրաստեմ տպագրու-
թեան համար և թէ տեղիցս կը թղթակիւմ
«Մշակին», որը ինձ համար աւելի քան ցան-
կալի է: Արամեան դպրոցով մի նոր շրջան
բացվեցաւ պարսկալայի առաջ, կազմելով մի
նոր վերածննդի զարգացում:

Դրանք էին անա իսկական առիթները, որոն-
ցից Բաֆֆին ուղեւոր օգտվել, նոր յոյսերով և
նոր եռանդով յիշված եկաւ ընտանիքից Թաւրիզ
և մանկելով ուսուցչական նոր կազմի մէջ, սկսեց
չարունակել իր պաշտօնը Արամեան դպրոցում:
Հինգ տարի էր, որ ես չէի տեսել Բաֆֆին,
չքաւորութեան սև օրերը և դառն ապրուստը

Գ Լ Ո Ւ Ն XV

Բաֆֆին որպէս ուսուցիչ
Հանգուցեալ Անդրէաս Կալիկոպոս Յովնան-
նիսեանը 1875 թվականին Ատրպատականի
թեմակալ նշանակվելով, եկաւ Թաւրիզ և իր

70%-ով տայ հանքերը: Եթէ ստոյգ լինի այդ լուրը, էլ միայն այդ տեսակ մի կարգադրութիւնն աւելի քան դատաւարութիւն է: Ինչը կարող էր ստիպել էլ միայն այսպիսի ափաշ կարա սխալ, կամ, եթէ կարելի է այսպէս ասել, երեսպաշտութիւնն անել: Այսքան էլ անխաբար զանցառութիւնն անպատեհի է մի հիմնարկութիւնից, որ կոչված է իր գործերը վարել օրէնքի հիման վրա և պաշտպանել մի ազգի եկեղեցու շահերը: Կրկնում ենք, որ չենք կարող հաւատալ այս լուրին: Իսկ եթէ դա ճիշտ է, պահանջում ենք յանուն խղճի և արդարութեան, որ ուղղեն իրանց սխալը նրանք՝ որոնց պարտքն է:

Միթէ յայտնի չէ էլ միայն, որ Գանձասարի վանքը կիսաւեր և կալուածքը խարխալած միմիայն մէջ են, իսկ պարտքերն ու հարկերը սպառնում են կալուածքը ձեռքից տալ: Ուրեմն ի՞նչը կարող է արգելք լինել այնպիսի մի առիթ, մի շահաւէտ դէպք ձեռքից տալուն, ինչպիսին հանքերի շահագործութիւնն է. և այն էլ տարիներ շարունակ անհոգութեան, մոռացութեան և անտարբերութեան մասնակցով...

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 28-ին

Քաղաքացիական վերջին մարտի համարում Հ. Ա. Ղազիկեան հանդէս է եկել «Երեցեան և Բազմաբան» թերթում: Ինչպէս երևում է այդ թերթումից ոճից և բովանդակած անհարկութիւններից, Հ. Ղազիկեանին դուր չէ եկել իմ «Մշակի» մէջ գրածը («Մշակ» 1902 № 205), թէ Ոսկերարի կամ Մետաղագործի շնորհիւ դուր չէ միայն Հ. Ղազիկեանին, որ իմ համարում էր միջին դարի անհայտ (barbare) գրաբարը: Բայց փոխանակ ուղղակի ինձ պատասխանելու, քանի որ ես էի առիթ տալով, Հ. Ղազիկեան ձեռք է առնում հանգուցեալ Երեցեանին, հիմնվելով այն բանի վրա, թէ Երեցեանին էլ քսան տարի առաջ ասել է թէ ճարտար (մետաղագործները) չը վերադարձրին Ոսկերարը... Բայց վերջինիցս մէջ անպակաս են եղել այնպիսի ճոխ և փարթեղ գրիչներ, որ պատկեր կարող էին բերել մեր միջին դարի մասին: Գրող է Բանասեր: Եւ անա ցոյց տալու համար Հ. Ղազիկեանի վերաբերմունքը դէպի մեր հանգուցեալ հայրենիքը, առաջ բերեց այստեղ մի քանի օրինակ այն խոսքերից, որ նա ուղղում է Երեցեանի հասցէին: «Տեսնո՞ւք Երեցեան ընտանի մէջ, հանդիպե՞լ որ տասնի լեզուի մը (Բազմաբան)»... Երեցեան Պաշտօնական Ապրանքի նման եռանդունքով վրա տեղաւորած զուտ կը փչէ փողոտայից այս պատգամը... Դու, ով Երեցեան, իրաւ որ և ինչ քաջասիրտութեամբ ու յանգիստով մտածելով կը փորձի միջին դարի մէջ գրելը... Ի՞նչ տուա քեզի աչք ծուռ գաղափար, որով է մոռարցի, գտար, որ իմաստակար տարածեց այդ գաղափարը, որ իմ զիպ տակ ծաւալեց այդ խաղ, անհամ և անլի գաղափար... և դու ինչուս ունանց քիչ մը մտածելու ելար բերան եղար այլանդակ և անիրաւ գաղափարի մը և այլն, և այլանդակ էլ չը բաւականանայով Հ. Ղազիկեան վերջապէս տանում, ըլլում է Երեցեանին...» «Տեսնո՞ւք այն խոսքը, որ Երեցեանի միջին դարի մէջ գրելը է անգիտութիւն, մի բազմաշխատ մասնագործի դէմ: Բայց ինչպէս կարող եմք «Քաղաքացիական» նոյն համարում տպված նոյն Ղազիկեանի մի քանի տեղաւորումները:

Անի պիտի կոչու մնայ միշտ, Թէ և հազնի գո՞ւմ կամ գիշտ,

Բանասերութեանը, որը կատարելագոյն և հաւատարմութեան է իր պոռոտաբան հեղինակին: «Քաղաքացիական» հովանաւորած «Երեցեան»-ը ու՞րա անուանողն է (II) Գրիգոր Բալասանցի հետ:

Գալով բուն խնդրին, այն է ոսկերարի լեզուի հարցին, այդ մասին առանձնապէս կը խօսենք, երբ Բալասանցի բար և կ'ի թ յորդուածագործը կը պատասխանէ յատկապէս մեզ, ինչպէս նա խոստանում է աներ Ուրեմն առայժմ միայն այսչափ:

Սարուխան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Երէկ, երկուշաբթի, մարտի 31-ին, Թիֆլիսում հանդիսարան կերպով թաղեցին Թիֆլիսի առաջին արական զինամարտի տեսուչ Կուսուկոյն Հանգուցեալի մարմինը, որ պէտք է Թիֆլիս հասած լինէր կիրակի օր, ուղևորւած մի օրով և հասաւ երկուշաբթի առաւօտ: Գիմնազիայի ուսուցիչները աշակերտները, նաև ուրիշ դպրոցների ներկայացուցիչները և յարգողները պատկերասրահով բեմադրված չորս զինակա-

նակ առաւօտեան ժամի 10-ից սպասում էին Դագաղը վակզայից հանդիսարանը յուղարկուելու: Թեմաքը տեղափոխվեց դէպի զինամարտի եկեղեցին: Այդտեղ կարգը կատարելուց յետոյ մարմինը տեղափոխվեց Կուկիայի ուղղափառ գերեզմանատունը, ուր և յանձնվեց հողին: Դագաղի վրա խօսքերն դամբանականներ գիմնազիայի զինակաւորը և երկու աշակերտ:

Ստացանք տիկին Հ. Մարտիրոսեանից 5 թուրքի և պ. Նուրիյանից—3 թուրքի զատկական տոներին Թիֆլիսի չքաւորներին բաժանելու համար:

Մեզ խնդրում են տպագրել հետեւաւր: «Գրիստօնական եկեղեցու պաշտօնականների գըլխաւոր պարտականութիւններից մինն էլ քաւորութիւնն է. բայց ներկայումս մեր եկեղեցում այդ կատարվում է շատ սովորական և մեծ պատի օրերը: Մեր ժողովուրդը շատ է սիրում կենդանի խօսք, քարոզ, և այդ երևում է նրանից, որ մեծ պատի կիրակի օրերը, երկուշաբթի, խումբ-խումբ այն եկեղեցիներն են յաճախում, ուր խումբ են, թէ քարոզ պիտի լինի: Եւ ինքը սիրող սիրողներին եւ այս տարի ներկայ եմ եղել Թիֆլիսի զանազան եկեղեցիներում հինգ քարոզների ժամանակ և միշտ զուրա եմ եկել անմիջապէս և տխուր ազատութեան տակ: Եւ լսել եմ և բարձր հոգեբարականի, վարդապետի և քահանայի քարոզներ, որոնք իրանց անբովանդակ, անկապ, անմիտ, դէսից-դէնից, ծիծաղ չարծող և գուհիկ գրոյցներով, եթէ աւելի չտանք՝ զգուցեղի են, և ժողովուրդը, դեռ քարոզը չը վերջացած հեռացել է եկեղեցուց բացականջելով: Եւսել չի լինում, ինչքան է առում, Տէր Աստուած, այսքան էլ տգիտութիւն... Ուստի քանի որ մեր հոգեբարականները անպատրաստ են, եթէ ուրիշ ոչինչ չտանք, ցանկալի էր, որ հոգեբար իշխանութիւնը, վերջ տալով այս դրութեանը հրամայէր տպագրել տալ կիրակի օրերում կարգացած աւետարանը աշխարհաբան և հասկանալի լեզուով և պատուիրէր քահանայներին կարգաւոր ժողովուրդի առաջ քարոզի փոխարէն: Սրանից աւելի օգուտ կը լինէր, քան ներկայ անբովանդակ, անկապ, անմիտ և դատարկ քարոզներից:

Ստացանք Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան 1902 թվականի տարեկան հաշիւը, որից երևում է, որ ընկերութիւնը այդ թվականի ընթացքում մուտք ունեցել է 142 անդամութիւններից—852 թուրքի, երկու անդամութիւններից միասուց 300 թուրքի, Թիֆլիսի ժողովարանի ամսարային ընակարանի այգում մայիսի 26-ին տեղի ունեցած զբօսանքից—1600 թուրքի 26 կոպէկ, զեկտեմբերի 14-ին տեղի ունեցած պարբերականից 1935 թուրքի, ընկերութեան պատկանող դրամաշրջաններից տոկոս—846 թ. 22 կ., կար ու ձեռն ուսումնարանի արդիւնքից 1752 թուրքի 65 կոպէկ, ընդամենը—7291 թուրքի 13 կոպէկ: Նոյն թվականին ընկերութիւնը ունեցել է ծախք կար ու ձեռն ուսումնարանի վրա 5846 թ. 4 կ., որից ծախքեր 597 թ. 67 թ., ընդամենը 6443 թ. 81 կ.: Ընկերութիւնը 1902 թվականին ունեցել է անձնակազմի զուտ մարդ—10,000 թ., մասնաւոր—2000 թուրքի և պահեստի—8500 թուրքի:

Մայրաքաղաքի նշանաւոր դերասանուհի Լ. Նավոյանայի ուղևորվել է դէպի հարաւ և ի միջի այլոց Անդրկովկաս մի շարք ներկայացուցումներ տալու համար: Զատիկ առաջին շաբաթվայ ընթացքում նա կը լինի Բագուում, որտեղ նա կը տայ ներկայացուցումներ Թաղիկի թատրոնում: Նավոյանայի վերջին է իր հետ Պետերբուրգի Շերո թատրոնի գերասանների խումբը: Բեմադրող տիկին, «Մօնա Վանա», «Արծուիկ», «Զագա», «Նորին գերազանցութիւն», «Տիկին Սան-ժէն» և ուրիշ պիէսներ: Սոմեր յետոյ կուղևորվի Թիֆլիս, ուր կը տայ ներկայացուցումներ Թիֆլիսի արտիստական ընկերութեան թատրոնում:

«ԲԱՅԿԱՅԷ» լրագրին հետագրում են Գանձակից, որ պիտեստ Հասանբէկովին աղողվել է կալուածները յայտնի աւազակ Ալի-բէկ Նալաֆ-Լուրի օղուն:

«ԲԱՅ. ԱՅԷ.» լրագրից հաղորդում է, թէ Պետերբուրգի մահադատների մէջ մօտ օրերումս ընկել է Ջ. Պաղիկի միջնորդութիւնը Բագուում նոր ընկերութեան բաժանմունք բանալու մասին: Ընդհանուր ժողովը

որոնց խնդրել կառավարութիւնից թոյլ տալու բանալ յիշված բաժանմունքը:

«Рыб. Вѣд.» լրագրին հետագրում են Պետերբուրգից, «Այսօր, մարտի 25-ին, Ա. Ն. Պիպինի յօդուածը չնորհաւորելու համար՝ նրա ընակարանում հաւաքվել էին բազմաթիւ բարեկամներ, յարգողներ, և պատգամաւորներ: Առաջին ուղերձը գիտութիւնների ակադեմիայի կողմից կարգաց Վիսլովսկի, Պետերբուրգի համալսարանի կողմից—Մանդլիշտամ, ռուս գրականութեան սիրողների ընկերութեան կողմից—Ա. Ն. Վիսլովսկի, Պատմագիտական ընկերութիւնից—Կարէնի, Ապա ողջունեցին յօդուածին «Украина» ընկերութիւնը, Գրական ֆօնդը, Պուշկինեան ընկերութիւնը և «Миръ Божій» ամսագիրը: Ստացված են նաև բազմաթիւ հեռագրերից դասական գիտական հաստատութիւններից: Նոյն օրը, երկուշաբթի, «Դեռնօ» հիւրանոցում, տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որին մասնակցում էին բազմաթիւ անձինք յօդուածի յարգողներից:

ԱՍԽԱՐԱՆԱԿԻՑ մեզ գրում են. «Անցեալները կայացաւ քաղաքային դպրոցի չքաւոր աշակերտներին օգնող ընկերութեան ընդհանուր ժողովը, որ քննեց և վաւերացրեց նախորդ տարեկան հաշիւը և ընտրութիւններ կատարեց: Վարչութեան անդամներ, զաղտնի քուէարկութեամբ, վերընտրվեցին՝ քաղաքապետ Ա. Գրիգորեան, ըմ. Ա. Սարգսեան, Ջ. Տէր-Գրիգորեան և Յ. Յարութիւնեան, նոր ընտրվեցին պ. պ. Վ. Շահպառնեան և Տ. Տօնակալեան: Վերաստուգել յանձնաժողովի անդամներ ընտրվեցին պ. պ. Մ. Յովսէփիով, Ի. Դեմէնկո և Շ. Դեմիրչիյան: Բացի դրանից՝ ժողովը վճռեց միջնորդել ուր հարկն է, որ թոյլ տրվի ընկերութեան գործունէութիւնը տարածել նաև տեղական ծխական ուսումնարանների չքաւոր աշակերտների վրա, որպիսի նպատակով նոր կանոնադրութիւն պիտի կազմվի՝ համաձայն այդպիսի ընկերութիւնների նօսմայ կանոնադրութեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Figaro» լրագրի թղթակիցը հաղորդում է Լօնդոնից, թէ երկար բանակցութիւնից յետոյ Լօնդոնի և Պարիզի մէջ, այժմ վերջնականապէս մշակված է Եւրոպայի VII-ի տեսակցութեան ծրագիրը: Ֆրանսիական նախագահ Լուիս Բրիտան Ինչպէս յայտնի է, Եւրոպայի թագաւորը առաջինը ցանկութիւն յայտնեց տեսակցել Լուիսին հետ. նա հասկացնել տուեց, որ ինքը շատ զո՞ւ կը լինի, եթէ այդ տեսակցութիւնը տեղի ունենայ իր ճանապարհորդութեան ժամանակ Եւրոպայում—Պարիզում կամ Միջերկրականի ափում, ինչպէս յարմար կը լինի նախագահին: Սկզբում մտադրութիւն կար տեսակցութիւնը նշանակել որ և է տեղ հարաւում, բայց յետոյ դերադատութիւն տրվեց Պարիզին, ուր և կը կայանայ տեսակցութիւնը, Եւրոպայի թագաւորի վերադարձի ժամանակ իտալիայից դէպի Անգլիա:

Անգլիական լրագրիցները հաղորդում են այն ճառի բովանդակութիւնը, որ արտասանել է Գրազգօյում ծովային վարչութեան զլխաւոր կառավարիչը Այդ ճառի մէջ նա ապացուցանում էր, որ Անգլիային անհրաժեշտ է ունենալ այնպիսի զօրեղ նաւատորմ, որ ընդունակ լինէր աշխարհում մարտել երկու աշխարհորդ ծովային պետութիւնների միացեալ նաւատորմի դէմ: Ուստի նաւատորմը Անգլիայի համար կենսական է մանկան հարցն է Ամերիկայի կարիք չը կայ, —ասաց ճառախօսը, —հոգա թաշտ, թէ պետութիւններ ինչ զգացումներ են տանում դէպի Անգլիան կամ հաշուել անել այս կամ այն պետութեան բարեկամութիւնը, հարկաւոր է միայն հարցնել, թէ ծովային ինչ ոյժերի տէք է Անգլիան և գործնել համաձայն այդ հարցի պատասխանին:

Եւրոպական պետութիւնների համաձայնութիւնը բեֆօրմներ մտցնելու հարցի մասին Մակեդոնիայում և Հին-Սերբիայում անհաստատ դուրս եկաւ «Нови Србобрани» լրագրի ասելով, այդ հարցի մէջ է թագնված Թիւրքիայի այնքան անփոքի վերաբերմունքը դէպի բեֆօրմների գործը: Ներկայումս արդէն զրահանապէս յայտնի է, որ Գերմանիան իշխուեալ միացաւ ռուս-աւստրիական վերջին համաձայնութեան պաշտօնապէս, սակայն զաղտնի կերպով շտապեց հաւատարմելու Բ. Դուրը, որ նա թոյլ չի տայ ամենին արտաքին միջամտութիւն կամ ճնշում Թիւրքիայի վրա՝ բեֆօրմների գործի համար:

Իրադատական շրջաններին մի փոքր յուզեցին այն լուրերը, թէ սուլթանը հրամայել է Եւրոպայից Կ. Պօլսի փոխարէն, և ասուտեղից էլ, շատ կարելի է Մակեդոնիա համարել չորս հեծելազօր զնդերը: Համարիք է հեծելազօրը կազմակերպվեց 1892 թվականի աւարական

գաւառներում քիւրդերից և արաբներից, որոնց մինչև այդ ժամանակ չէին ընդունում զինուորական ծառայութեան մէջ: Այժմ նա մօտաւորապէս բազմազան է. 70 զնդերից: Նրանք նոյն ժամանակահատուկներն են, միայն հեծելա, և այդ են ընկնում իրանց բարբարոսութեամբ: Դեպքանութիւններին միայն մի փոքր հանգստացրեց կիսապաշտօնական հերթում, որ թէպէտ այդպիսի հրաման տրված էր, բայց նա չի գործադրվի—հարկաւոր է միայն պատեհական պատրաստութիւններով զբաղեցնել անհանգիստ համարիակներին, և ուրիշ ոչինչ:

Սուլթանը, լուրերին նայելով, շատ վատուած է ռուսաց հեւապատուի կեանքի դէմ արած փորձի պատճառով և մասնաւոր նրանով, որ յանցաւորը ոչ թէ պատասխան է, այլ կանոնաւոր գործի գին: Այդ դէպքն էր պատճառը, որ դրեց սուլթանին գիշեր, վերջապէս, մեծ վիզիրի օտարութիւններին և խիստ միջոցներ ձեռք առնել արաւացիների դէմ, չը նայելով պատրաստութիւնների և պալատի թիկնապահ զնդի արաւացի բեկերի բողոքներին: Թիւրքաց կառավարութիւնը ընդհանրապէս վրդովված է արաւացիների վարմունքից և հաւատացում է, որ Իրաւիքը և նրա համախոհները կը դատվեն զինուորական դատարանով և կալաւորան կը բարձրացնեն: Անհրաժեշտ է օրինակելի պատիժ՝ արաւացիներին լաւ դաս տալու համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲՈՒՄԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

29 մարտի

ՄՕՍԿՎԱ, Կայսերական գնացքը եկաւ առաւօտեան 10 ժամ 50 րոպէին: Բարձրագոյն ցանկութեան համեմատ դիմաւորութիւն չը կար: Կայսրանում Նորին Բարձրութիւններին դիմաւորեցին՝ օգոստոսիա զենեքաւոր-հանապետը, Նոր ամուսինը, Մեծ Իշխան Պաւել Ալեքսանդրովիչի զաւակները և քաղաքային ու տեղական իշխանութիւնները: Թագաւոր Կայսրն ու Կայսրուհին գնացին Իււէրիան Աստուածամօր մատուռը, որտեղ Նորին Մեծութիւններին խաչով դիմաւորեց օրագնացը Պարֆէնիւս Նորին Մեծութիւնները աղօթեցին հրաշագործ պատկերի առաջ և ապա օգնելով բացակայելու ընկերների ուղեկցութեամբ գնացին դէպի Կրեմլի վանքի պալատը:

Կ. ՊՕԼԻՍ, Ռուսաց դեպքանատանը հոգեհանգիստ կատարվեց Շչերբինայի համար Կիրակի օրը հանդիսաւոր ժամասացութիւն տեղի կուենայ գերլուստիական մարմնի ներկայութեամբ:

ԲԵՐԼԻՆ, «Kölnische Zeitung»-ին հաղորդում են Կարլսրուէից, —Այստեղի փամփուշտի գործարանը մեծ պատուէր ստացաւ Թիւրք կառավարութեան կողմից:

ՄՕՍԿՎԱ, Մակեդոնիայում նոր հրոսակալըմբեր յայտնուեցին:

30 մարտի

ՄՕՍԿՎԱ, Զինուորական միմիայն ճանապարհ ընկաւ դէպի Կիւտայնդե՝ սահմանագծի պահաւարներին զննելու համար: Կտրագրութիւն է կարված մի քանի տարածակէտերը ուղեղացնելու մասին: Ժողովը կը փակվի երկուշաբթի օրը:

ԲԵՐԼԻՆ, Այսօր մայր տաճարում պատարագ և հոգեհանգիստ կատարվեց Շչերբինայի համար: Ներկայ էին թագաւորի ներկայացուցիչը, միմիայնները, զենեքաւոր, ռուսաց և աւստրիացաց զենպանները և խումբ բազմութիւն: Ժամասացութեան ժամանակ խանութները փակված էին: Բազալը օգի կերպարանք էր ընդունել:

Կ. ՊՕԼԻՍ, Գլխաւոր վերատեսուչ Խիլմի փաշան հաղորդում է, որ անհին է այն լուրը, թէ արաւացիները նորից համախառնվել են Միւրովիցայի վրա յարձակվելու համար: Անհրաժեշտ դէպքում արաւացիների դիմադրութիւնը ճնշելու համար վերստի կը կենտրոնացաւ են 20 զօրագունը, Իպէկում 8 և Միւրովիցայում 8: 100 հոգուց բաղկացած մի հրոսակալութեամբ Բօլքարիայից անցաւ Մալեւոյան հովիտը:

Խիլմի փաշան հաղորդում է, որ մօտ ժամանակները Օրիօղի գաւառում տեղի ունեցած դէպքերի մասին տարածված լուրերը չափազանցած են: Հաստատված փաստ է, որ հրոսակալների առաջնորդ Դաւիթով մեռել է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, «Правительственный Вѣстник»-ի № 72-ում հրատարակված է մանրամասն տեղեկութիւն Պիտերբուրգի «Կանանց բժշկական ինստիտուտում» և համալսարանում տեղի ունեցած անկարգութիւնների մասին:

31 մարտի

ՄՕՍԿՎԱ, Տեղի ունեցաւ Բարձրագոյն գնացքը դէպի Ուսպենսկի տաճար: Բարձրագոյն գնացքը սկսվեց առաւօտեան ժամը 10 1/2-ին: Պա-

*) Իրաւունք ունենէ կառավարելու, թէ Հ. Ա. Ղազիկեան այս՝ barbare բառի բուն միտքն չէ հասկանալ:

(**) Եւ անհրաժեշտ էր...

Электротпечатная Груз. Изд. Т-ва, В.-Ванкская ул.